

2007

235
4-34

1889

ny. 158

ՀԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅ ՍՈՒԳԻԱՍԵԱՆՑ ՔՕԾԻՑ




معارف نظارت جلیل سنک رخصتیه طبع او نشدر

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՑՈՎՃԱՆԱԿԱ ԹՈՒԱՑԵԱՆ

ԱԵՐԱ, ՄԵՇ ԳՈՂՈՑ ԹԱԽ 65

1889




253

4-34


۴

ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԲՈՑ ՍՈՒԳԻԱՍՏԵԱՆՑ ԳՈՇԻՑ



معارف نظارات جليله سنك رخصته طبع او تنشر



Կ. ՊՈՂԻՄ

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՑՈՎՀԱՆՆԵԼ ԹՈԼԱՅԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՇ ՓՈՂ.08 Թ.11 65

1889

21



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ակադեմիկոս Հ ա յ ո ւ ն ե լ Ա զ գ մ ը , որ
կը ճանաչէ իւր նուիրական պարտքն տածելու իր սրտին
մէջ բարեպաշտ և երախտագիտական ջերմեռանդութիւն
մը առ այնու , որք իւրեանց արիւնը թափած են զինքն ՚ի
խաւարէ ի լոյս , ի մոլորութենէ ի ճշմարտութիւն բերելու
համար : Վասն որոյ շատ գոհ եղանք , երբ տեսանք որ Սըր-
բոյ Սուքիասեանց վկացից արեամբն ոռոգեալ երկրին բնա-
կեցք՝ առ այս սուրբս ունեցած աւանդական ջերմեռանդու-
թիւնը անջինջ պահելու , և աւելի բորբոքելու նպատակաւ
փափաք կը յայտնէին ունենալու Սուրբ Մարտիրոսաց վա-
րուց և վկայաբանութեան պատմութիւնը աշխարհիկ լեզ-
ուաւ , յորմէ զուրկ ըլլալով զրկուած էին բնականապէս այն
ծանօթութիւններէն որք կարեւոր էին այս իրենց Սուրբ և
նուիրական պարտուց անժերի կատարման համար :

Մեր սրտին գոհունակութիւնը չափազանց եղաւ երբ նը-
կատեցինք որ մենք այդ ազնիւ հաւատացելոց իզձն լեցնե-
լով , կատարած կը լլամբ նաեւ ուրիշ ծառայութիւն մը , որ
ըւա ինքեան ոչ նուազ նուիրական է , ծանօթացնելով սի-
րելի ազգին և հայրենեաց այն Մարտիրոսները , որք յետ
Սըրբուհւոյն Սանդիստոյ և Ոսկեանց մեր երկրին նախա-
վկայքն կը համարուին , և որոց արիւնը սերմ եղաւ մեր
բարեբեր երկրին համար Քրիստոնեայ Հայութեան մը , և
որոց մարտիրոսութեան արդասիքն եղաւ տեսնել որ Աս-
տածածային նախախնամութիւնը առանձին սէր մը և խնամք
մը ունեցած է մեր տոհմին վրայ , զի զանազան Մարտիրոսաց
արեանց սերմերովն միլիոննաւոր հոգիներ ազատած է կու-
պաշտութեան խոր խաւարէն և արժանի ըրած է Քրիստո-



740
39

2001

նեական լուսոյն, յորմէ միմիայն յառաջ կընայ գալ թէ՛ բարցական թէ՛ մոտաւորական, թէ՛ ազգային և թէ՛ ընտանեկան պայծառութիւն։ Երջանիկ պիտի համարիմք զմեղ եթէ սիրազեղ սրտերուն փափաքն ըլով միմիթարութիւն ունենանք միանդամայն տեսնելու մեր ազգակցաց սրտերն որք երախտագիտական զգածմամբք տոգորեալ դործնականապէս իսկ հետամուտ կ'ըլլան նմանելու երանելի նահատակաց սքանչելի օրինակին. և արհամարհելով ամեն տեսակ գժուարութիւնքն և ակնածութիւնքն կը յարին Քրիստոսի ճշմարիտ Հօտին, կաթողիկէ Սր. Եկեղեցւոյ, և ընդմիշտ այնմ յարեալ կը մնան, զի հոն միայն կարելի է գտնել ուղիղ ճանապարհ որ տանի ի կեանս, և ուր կը փառաւորուի Աստուած և է սքանչելի ի Սուրբս իւր։

ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅ ՍՈՒՓԻԱՍԵԱՆՑ ՔՈՇԻՑ

Մեր ամենասիրելի Փրկչին յերկինս համբառնալէն ետքը Հայաստանեայց Առաքելոյն Սրբոյն Թագէսոսի քարոզութիւնքն և Սրբուհի Սանդիստոյ թափած արիւնն՝ որ օր մը սերմ պիտի ըլլային վերստին տարածութեան Քրիստոսական կրօնի ի Հայո, Սանատորուկ թագաւորին և նորա որդւոյն Արտաշիսի չար և կրապաշտական գործքերովն օր քան զօր բոլորովին Հայոց սրտերէն անհետանալու ժամանակն, Աստուածային նախախնամութիւնն չ'ուզեց զրկել զՀայս այն շնորհներէն և այն միջոցներէն զոր ընդ միշտ առատօրէն կը մատակարարէ վասն փրկութեան հոգւոց։

Վասն որոց Թագէսոսի աշակերտներն Սուրբ Ոսկեանք որ երենց վարդապետին մահուընէ յետոյ, ի Հայո, Ծազկէոյ լերանց մէկ ծմակին մէջ միայնացած կը ճգնէին, ուղելով շարունակել իւրեանց վարդապետին առաքելութիւնը ի Հայո, և իւրեանց աշակերտակցին սրբուհի Սանդիստոյ թափած մարտիրոսական արիւնն ի դերե չ'հանելու համար, իշան լեռնէն վար և ոկտան Քրիստոսական կրօնի ճշմարիտ և երկնային վարդապետութիւնքն քարոզել յարքունիս Արտաշիսի։

Սա՝ որ աշխարհակալութեան հոգւով միայն վառուած էր, անընդհատ պատերազմներով կ'զրազէր, որով և հետեւաբար Սրբոց Ոսկեանց քարոզութիւնքն անազգեցիկ և անպատող մնացին անոր համար, և թշուառն սիրելով առաւել զիառու աշխարհի, զաշխարհ և զաշխարհայինսն զրկեցան ի լուսոյ կենսատու վարդապետութեան։

Սակայն Սրբոց ճիզն և աշխատութիւնքն բոլորվին անօդուտ չ'եղան, վասն զի նոյն պահուն յորում կը քարոզէին սոքա, արքունեաց մէջ կը գտնուէին մի քանի աղնուական անձինք, ազդականք Սաթինկայ Դշիսյին:

Ասոնք Ալանաց երկրէն, թագաւորակամն ցեղէ աղնուական պալատականք էին, և իրենց ազդական Սաթինիկ թագուհւոյն հետ մէկանէլ եկած էին 'ի Հայո, և իրենց զինուրական ճարտարութեամբն և քաջառայդութեամբն արքունեաց մէջ թէ թագաւորէն և թէ թագուհիէն ինչպէս նաև բոլոր պալատականներէն սիրուած և մեծարուած էին:

Ահա ըստ անքնին տնօրինութեան Աստուածային նախախնամութեան, սոքա՝ ազդեալ, ի չնորհաց Հոգւոյն Սրբոց յօժարակամ կամօք որբոց Ոսկեանց քարոզած լուսալիր և կենսատու վարդապետութիւնքն լսեցին, և աշակերտելով նոցին թողուցին արքունիքն, և հետեւելով իրենց վարդապետաց քաջուեցան յառանձնութիւնս լերանց:

Սուրբ Ոսկեանք նկատելով որ իւրեանց ձգած սերմն բողոքիլ սկսաւ, յցեալ հոգեւոր միսիթարութեամբ սկսան կրթել իւրեանց նորաբոյս աշակերտքն, որք ըստ վկայաբանից 18 կամ 19 հոգի էին. և երբ տեսան որ անոնք կրթուեցան կատարելապէս 'ի վարդապետութիւնս Քրիստոսական հաւատոյ, անյապաղ մկրտեցին զանոնք Եփրատայ ջրաբուխող և ծաղկաւէտ ականց մէջ:

Այս երանելի նորածնելոց գլխաւորն էր Բահագրաս կամ Բարաքադա, որ մկրտութեան Սուրբ Աւազանին մէջ Սուրբիս յորջորջեցաւ, (որ յունարէն լեզուաւ իւսիքիոս, այսինքն հանդարտեալ, լուեալ կը թարգմանուի) իրը խաղաղական կեանք մը ստացող, ինչպէս կը լսեն վկայաբանք: Միւս ընկերներն կոչուեցան մկրտութեան մէջ Դուկիանոս, Պողոքտէս, Կողրատոս, Խղիոքուքիբոս (կամ Անտիոք և Աւքիբոս), Մէմաս, Փոկաս, Սերգիոս, Գոմետիոս, Աղբանիս կամ Աղբիանոս, Զոսիմէս, Բիկոսոր, Թաղլէսա կամ

Թաղլէսա, Յորդանէս, Անաստաթրէս, Թէոդիտոս կամ Թէոդոսիոս, Յակոբ և Թէոդոսիոս, բոլորն մեկանէլ կոչուելով իրենց Գլխաւորին անուամբը Սուրբիասեանք:

Երանելի դասուն մէն մի անհատ, երբ վրկութեան Աւազանին մէջ մտնելով կը մկրտուէր, կը տեսնէր զբրիստոս վերինային վարդապետն հանդէպ իւր, այսինքն Մկրտութեան Աւազանի վոխաղըուած աղբիւրակին դիմացն, բըլ բոյն վրայ, և ուրախութեամբ լցուած աւետիս կուտայր իւր ընկերացն, վուժացնելով զանոնք ընդունելու Քրիստոսի կնիքն անյապաղ:

Որդեգրեալ ուրեմն Երկնային վարդապետին և վերըստին ծնանելով, չուղեցին երանելիքն այլևս բաժնուիլ իւրենց վարդապետներէն, այլ անոնց քով կրօնաւորելով շընորհակալ կը լային Աստուծոյ իրենց չնորհուած անպատուած պարգեւացն համար, և ի յիշատակ այն երջանիկ ժամերուն իրենց մկրտութեան տեղն խաչ մը կանգնեցին, Առետեաց խաչ կոչելով զԵ.յն, 'ի յիշատակ երեւման Փրկչին, զոր միմեանց կաւետէին իժամ մկրտութեան:

Սուրբ Սուրբիասեանք՝ թէե ընդ ընկերակցութեամբ և առաջնորդութեամբ Սրբոց Ոսկեանց ամեն տեսակ երկնային միսիթարութեամբ լի էին առանձնացեալ յուեէ աշխարհային հոգերէ և վիշտերէ, մինչեւ իսկ սկսած էին վայելել 'ի հանդերձելուն երանելեաց համար պատրաստուած յաւիտենական վայելից յուսալիր միսիթարութիւնքն, այսու ամենայնիւ կը տիրէին և կը հոգային տեսնելով իրենց ազգականն զիշեոյն Սաթինիկ և զհամայն արքունիս, ինչպէս նաև այնչափ հոգիներ որք զուրկ ի ճշմարիտ լուսոյ, կռապաշտութեան անել խաւոսին մէջ կը խարիսափին: Ուստի սկսան՝ միշտ ընդ ընկերակցութեամբ իւրեանց սիրելի վարդապետաց, առանձնութեան վայրէն իջնալ և գնալ յարքունիս, ուր սկսան սակաւ առ սակաւ քարոզել զբանն կենաց:

Այսպիսի ընթացքի մը՝ Սաթինիկ չկրցաւ անտարբեր առ չոք նայիլ, վասն զի լաւ ըմբռնեց թէ իւր ազգականքն առաջին վիճակին մէջ չ'էին, այլ հետեւած էին Սրբոց Ուկեանց կրօնին և վարդապետութեանը: Ուստի վախնալով մի՛ գուցէ թաղաւորն և արքայորդիքն զինքնես նոցա համամիտ կարծեն, սկսաւ Սուքիասեանց ծուռ աշքով նայիլ, և արդիւց Ուկեանց արքունիք գնալու: Երբ Սուքիասեանք զայս իմացան, իրենք որ անբաժանելի սիրով կապուած էին իրենց ՚ի Քրիստոս ծնողաց հետ, չ'կրցին հանդուրժել այսմ, նա մանաւանդ լաւ ըմբռնելով մէկ կողմէն որ անօգուր էին իրենց քարոզութիւնքն, զորս իրբ մարդարիստ ուաջի խողաց նետերով անպտուղ պիտի մնային ևս, և վախնալով միւս կողմանէ թէ՛ չըլլայ թէ յաճախ երթեւեկութեամբ իրենք փորձութեանց վտանգի մէջ իյնան, այնուհետեւ խորչերով թէ՛ թագուհիէն և թէ՛ արքունիքէն, բոլորվին ձգեցին ամենայն ինչ և քաշուեցան իրենց ձգնավայրն, ուր կրօնաւորական և միայնակեցական կենօք ապրելով, կատարեալ հաւատքով և ջերմ սիրով կը պաշտէին զբրիստոս Փրկիչն ամենայն աշխարհի, յուսալով ի նա, որ օր մը արժանի պիտի ընէ զիրենք յաւիտենական երջանիկ տեսութեան: Զէին դադարեր երանելիքն ազօթելէ նաև այն խեղճ ժողովրդեան համար, որք իգերութեան սատանայի, խոր խաւարին մէջ կը դեգերէին, ՚ի դասապարտութիւն իրենց հոգւոցն:

Երբ սուրբերն այս եղանակաւ կ'անցնէին իրենց օրերն, բանսարկու օձն, թշնամին ճշմարտութեան և մարդկութեան չի կրցաւ հանդուրժել. ուստի իրեն արբանեկօքն սկսաւ փորձել զանոնք իրենց առանձնութեան մէջ: Վասն զի թագուհոյն վրոյր և վնյոն որդիքն՝ որ դեռ տղայ և աղայամիտք էին, տեսնելով որ իրենց մօրն ազգականքն բաւական ժամանակէ ի վեր արքունեաց մէջ չ'էին երևնար, վըրդովելով՝ պատճառն իրենց մօրմէն հարցուցին, որ յետու

չի կասեցաւ բուն պատճառն անոնց իմացնելէ, և պատմեց թէ ինչպէս Ոսկեանց խօսքերուն ականջ դնելով անոնք հետեւեր էին ասոնց:

Այս բանս լսելով տղայաբարոյ պատանի արքայորդիքն, և ուղելով սաստկապէս վնասելսրբացն, գրգռեցին իւրեանց երէց եղբայրն զԱրտաւազդ անոնց դէմ: Սա՛ որ բարուք մոլեգին և կատաղի երիտասարդ մ'էր, նոյնյետայն տեղեկացաւ Սրբոց բնակավայրն և անյապաղ առնելով իւր հետ զօրքեր և զօրականներ գնաց Սրբոց գտնուած աեղն: Հոն նախ և յառաջ սկսաւ շղոքորդիչ և քաղցր խօսքով հրապուրել զնոսա դառնալ յարքունիս ինչպէս յառաջն, և ապա երբ տեսաւ որ իւր խօսքերն չ'են ազդեր, և Սուրբ Սուքիասեանք յանձնառու չ'են ըլլար վերադառնալու յարքունիս, կանչեց անոնց վարդապետներն զՍուրբ Ոսկեանսն, զորս կ'ստիպէր որ յորդորեն իրենց աշակերտն լսելու իւր խօսքերուն և խրատուցն: Սակայն Սուրբ Ոսկեանք արդար զայրութով բորբոքած պատասխանեցին և ըսին թէ՛ Փրենք չ'էին կարող երբեք այսպիսի տաղօրէն և անօրէն թելադրութիւն մը ընելու իրենց ՚ի Քրիստոս վերածնած աշակերտացն, որք չափահաս լինելով կարող էին որոշել ըլլբարին և զօդտակարն, և ըստ այնմընտերել և գործել»: Այսպիսի հակառակ այլ իրաւացի պատասխանեւոյ մը համար Արտաւազդ և միւս արքայորդիքն սաստիկ բարկացած, սրախողիսող սպաննեցին զԱսկեանսն, այլ չ'համարձակեցան ձեռք վերցնել Սուքիասեանց վրայ, իրենց մօրն հետ ունեցած ազգականութեանցն համար. որով այսու ակնածութեամբ խնայելով անոնց, ազատ ու անարատ թողլով զնոսա դարձան կոր ՚ի գլուխ իրենց տեղն:

Ինչպէս բնական է, այս հարուածը խիստ ծանր էր երանելի Սուքիասեանց, որով իրենց սիրելի վարդապետներուն արիւնաթալաւ մարմիններն առին ժողովեցին, և որբացեալ զաւակաց նման մեծ սուգ ըրին, և ապա համա-

կերպեալ ընդ Աստուածային կամաց , լի երկիւղածութեամբ և ամենայն մեծարանօք զանոնք պատուաւոր տեղեր ամփոփեցին : Որով կոր ՚ի գլուխ մնաց բանսարկու օձն որ զհովիւս հարկանելով ուղեց ցրուել զոչխարս , այլ չ'յաջողեցաւ . վասն զի երանելիներն այս իրենց որդիական պարտաւորութիւնքն կատարելէն յետոյ , տեմնելով որ այնուհետեւ անհնարին էր այլ եւս հանգստութիւն դժնել թէ թագուհոյն թէ թագադաւորին և թէ արքայորդւոց կողմանէ , բոլորովին ասոնցմէ օտարանալու նպատակաւ միաձայն հաւանութեամբ , Սրբոց Ոսկեանց մենարանէն քիչ մը հեռու աւելի առանձին տեղ մը քաշուելով առանձնացան , և անոնցմէ ուսած վարդապետութեան և ընդունած կրթութեան համաձայն օր քան զօր հրեշտակական վարուց և կարգաց մէջ կը յառաջանային : Իրենց ճգնութիւնն այն աստիճանի հասած էր որ հակառակ իրենց փափկասուն բնութեանն , նոյն իսկ ծաղկաւէտ լերանց վրայի ինքնարոյս խոտերն՝ որով կը կերակրէին , շատ կ'երևէին իրենց , և իրենց սրտին մէջ երկիւղածութիւն մը ծագած էր , իրու թէ այն սունդն հեշտութիւն և փափկասութիւն ըլլար :

Եւ ահա այսպիսի երկիւղածութենէ և խղճահարութենէ շարժեալ Սուքիաս՝ իրենց գլուխն , կը դառնայ իւր ընկերաց և կ'ըսէ .

«Սիրելի եղբարք , այս ծաղկաւէտ խոտերն մեր մարմիններն չափաղանց կը գերցնեն և կը պարարեն , նման անբան անասնոց որոց ոչ գոյ իմաստութիւն : Ուստի եկէք քաշուինք ուրիշ տեղ մը որ անպտուղ և անոպայ ըլլայ . նամանաւանդ այս տեղերն եւս արքունեաց ծանօթ լինելով , կարելի է թէ՝ թագուհոյն մեր աղդականին փափաքանօքն գան վրդովել մեր առանձնութիւնն , և աշխատին թելադրելու զմեղ վերստին դառնալ յարքունիս , և ստիպեն ըդմեղ գնալ հոն և զբաղիլ մնոտի և աշխարհային հոգերով , ի մեծ վտանգ և ՚ի փորձութիւն մեր հոգւոցն » :

Հաղիւ լմնցուց Ս. Սուքիաս այս խօսքերն , սուրբերն յօժարակամ սիրով ձգեցին այնտեղն և գնացին Զրաբաշխլեռն , ուր հաստատեցին՝ իբր իւրեանց ճգնարան իրենց բնակութիւնն :

Այս լեռը Բագրեւանդ գաւառին մէջ Բագուան գիւղին դիմաց Նպատ լերան դէմ կիյնայ , որն որ Սրբոց գլխաւորին Սուքիասայ անուամբ Սոսկան կամ Սոսկան կոչուեցաւ , որն որ ուամկօրէն Քօսա տաղը ևս կ'ըսուի : Հոս երանելի Սուքիասեանք երկար տարիներ մնացին , վայրենի ոչխարաց նման խոտ ուտելով . իրենց վրայի ձորձերն բոլորովին փտելով մերկանդամ մնացին , ուստի և հետեւաբար օդոյն խըստութենէն իրենց մորթը քարի մամուռներուն նման եղաւ , և մարմիններուն վրայ մազ բուսաւ և այսու բոլոր անդամնին ծածկուեցաւ , և այս պատճառաւ Քօջը կոչուեցան վայրի քօշերու նմաննենուն համար : Այս վիճակին մէջ Աստուածային պահպանութեամբ Սուկաւէտ լերան վրայ քառասուն և չորս տարի ապրեցան զերծ յու և է հիւանդութեանց , և նման անմարմնոց ՚ի մարմնի իրենց օրերն և ժամերն մշտամուռնջ աղօթից մէջ անցնելով և խիստ ճգնութեամբ մը :

Այս ատեններն Արտաշէս թագաւորն մեռնելով իրեն յաջորդեց իւր երէց որդին Արտաւազգ , մինչ Պարսից նոյնանուն (Արտաշէս) թագաւորին յաջորդած էր Պերոզ :

Արտաւազգ՝ որ անպիտան մէկ մըն էր , կարող չըլլալով իւր Տէրութիւնը բարեկարդ վիճակի մէջ պահել , և իւր հօր բարեշինութիւնքն պահպանել , երկիրը բոլորովին տակնուվրայ ըրաւ , որով և խաղաղութիւնը ամենուրեք վրդովեցաւ :

Սակայն իւր անկարդ գնացիւքն հաղիւ կրցաւ երկուտարի ապրիլ , որով իրեն յաջորդեց իւր միւս եղբայրն Տիրան , որն որ նմանապէս փոխանակ երկրին բարւոքման զբաղելու , անհոգաբար կ'ապրէր , շարունակ որսի և զրօսանաց հետեւելով : Տիրանայ այս եպերելի ընթացքն շարժառիթ

եզաւ Պարսից ամբարտաւան և սէդ Պէրող թագաւորին, հետամուտ լինելու ընդհանուր Հայոց երկիրն իւր Տէրութեան հպատակեցնելու :

Սակայն Տիրան՝ Հռովմայեցւոց հետ բարեկամ եղած էր և անոնց հաւատարմութեամբ կը ծառայէր, և այս պատճառաւ Անասնինս կայսր անոր արքայական թագ և ծիրանի խրկելով, Հայոց աշխարհը պաշտպանել խոստացած էր : Վասն որոյ Պէրող՝ որ այս պատճառաւ աւելի զայրացած էր մէկէն չ'համարձակեցաւ յարձակիլ Հայոց վրայ, այլառիթ մը կը փնտուէր իւր նպատակին հասնելու . հետեւաբար ըսպասեց յարմար առթի մը, և շարունակ իւր մոաց մէջ կորոճայր և կ'ըսէր թէ՝ «Հարկ անհրաժեշտ է որ ես այս երկիրը քանդեմ, աւերեմ, և հայրենեաց սովորութեան համեմատ վրէժո առնում» : Ուստի յարմար ժամանակի մը մէջ անբաւ զօրք ժողուելով փութաց հասնիլ Հայոց սահմանը, և այնուհետեւ սկսաւ Հայոց աշխարհը աւերել քանդել, և այն բարեբեր երկիրն խոպանացնել և անպիտանացնել, այնպէս որ ընդհանուր երկիրը սաստիկ տագնապի և տարակուսանաց մէջ ինկաւ :

Իսկ երանելի Սուրբիասեանք այս ամէն յուղմունքն և խոռովութիւնքն իմանալով, ցաւելով կ'սպասէին թէ արդեօք ինչ եղանակաւ Պարսից թագաւորն Հայոց երկիրէն վըրէժ պիտի առնու, և թէ ի՞նչ պիտի ըլլայ այս դժբաղդ երկրին ճակատագիրն : Իսկ երբոր տեսան թէ օր ըստ օրէ երկրին տառապանքն և նեղութիւնքն կը յաւելուին, իբրեւ իրենց բնիկ հայրենեաց վրայ կարեկից ըլլալով, և ժողովելով ՚ի մի՝ ջերմեռանդ սրախւ սկսան Աստուծոյ օդնութիւնը խնդրել աղօթելով այսպէս :

«Ողբմէ՛ ով Աստուած քու մեծ ողորմութեամբդ այս դժբաղդ աշխարհիս վրայ, որովհետեւ թէպէտե անօրէնութեամբ լի է, այլ ըստ որում Դու ամէն արարածոց Աստուածն և Տէրն և Արարիչն ես, և ամէն ողորմութիւն և

օդնականութիւն ի Քէն է, և քու գթութեանդ չափ չիկայ, գարձո՛ւր այս երկրէն Քու սրտմութեանդ սուրը ու խընայէ անոր ո՛վ Տէր մարդասէր և անոխակալ, և քեզի փառք յամենայնի» :

Աստուած, որ կը սիրէ Սուրբ, հեղ և խոնարհ սրտերն, և կը լսէ իւր հաւատարիմ ծառայլոց խնդրուածոյն, լսեց երանելեաց պաղատանացն և ազատեց խեղճ Հայոց երկիրն անգութ Պէրողին ձեռքէն, որն որ Տիրանայ պաշտպանն և ապաւէնն եղող Հռովմայեցւոց կայսեր կողմանէ սպառնալոց պատգամ մը ընդունելով, և տեսնելով որ իւր զօրութիւնն բաւական չ'էր գիմագրաւելու Հռովմայեցւոց և Հայոց միացեալ բանակացն, որով և հետեւաբար աւելի ի վընաս և ի կործանումն իւր անձին և իւր թագաւորութեան պիտի ծառայէր եթէ յանդգնաբար շարունակիր իւր սպատակութիւնքն, առանց ժամանակ կորսնցնելու քաշուեցաւ և գնաց յերկիր իւր :

Ահա այսպէս աղօթիւք սրբոցն ազատեցաւ երկիրը քանդումներէ և աւերմունքէ, և գտաւ վերստին իւր նախկին խաղաղութիւնն, զօր տեսնելով Սուրբերն ուրախացան 'ի սիրտ և 'ի հոգի, և իւրեանց ճգնավայրին մէջ չնորհակալ կ'ըլլային Աստուծոյ, փառաւորելով զտուիչն ամենայն բարեաց, զԾէրն Տէրանց և զթագաւորն թագաւորաց :

Այլ մինչ մէկ կողմանէ Սրբոց սրտերն այս միսիթարութեամբ կը լցուէին, միւս կողմանէ չէին կընար չի տխրիլ տեսնելով ընդհանուր երկրին մէջ բանսարկու սատանային թագաւորելն, և այնչափ անչափ հոգւոց անոր գերութեան մատնեալ լինելն : Ուստի իրենց մոաց մէջ հետեւալ խորհուրդն ծագեցաւ, այսինքն լեռնէն վար իջնելով գոնէ մերձակայ բնակչաց Աստուածդիտեան լոյսը քարոզել, և կամաց կամաց իրենց բնակութեան մօտ թագաւանի բագիններն և կոոյց արձաններն կործանել, և փրկութեան նշանն այն տեղերն կանգնել :

նուած գաղանին հետ և յաղթելու նմին , աղօթելով այսպէս . «Տէր Աստուած մեր որ ամենագետ ես , չըլլայ թէ զարհուրեցնէ զմեղ այն չար գաղանը , որ յարձակելով կը դիմէ քու այս անարժան ծառայիցդ վրայ : Ով Տէր մի զրկեր ըդմեղ քու օդնութենէդ , և 'ի քեզ ունեցած յոյսերնիս 'ի դերեւ մի' հաներ , քու սրբութիւնդ շներուն մի' տար : Ով Աստուած մեր որ մարդկանց սրտերն ու խորհուրդներն կը ճանչնաս , գիտես արդէն որ մեր անձինքն քու ծառայութեանդ տուինք , որպէս զի քու 'ի յաւիտենից ըրած անսուտ խոստմանցդ արժանաւոր ըլլանք» :

Այնուհետեւ երանելիքն եռանդնագոյն սրտիւ վերացուցին յերկինս իրենց միտքն և բոլոր կարողութիւնները , և սկսան պատրաստուիլ այն սաստիկ կուոյն , զոր յայտնած էր Աստուած իրենց առանձին տեսլեամբ մը : Վասն զի Սուրբերէն մէկուն՝ որ Պողոքտէս կը կոչուէր , գիշեր առեն տեսիեր մը երեցաւ , զոր նա ինքն հետեւեալ առաւօտ իւր ընկերացն պատմեց :

«Այս գիշեր կը տեմնէի , ըսաւ Պողոքտէս , առիւծ մը որ Ալանաց արքունիքէն ելլելով կուգար դէպ 'ի մեղ , և երբ մեր քովն հասաւ սկսաւ սաստիկ կուուիլ ամենուս հետ :»

Անպատում եղաւ երանելեաց ուրախութիւնն ու ցընծումը , վասն զի լսաւ ըմբռնեցին այսու թէ մօտեցած էր արդէն իւրեանց տենջանաց լրման վայրկեանն , որով վերջապէս պիտի ազատէին այս արտասուաց հովտէն և պիտի արժանանային երթալու իրենց երկնաւոր վարդապետին Յիսուսի Քրիստոսի քով , և պիտի ընկերակցէին իրենց վարդապետաց Սրբոց Ոսկեանց հետ , 'ի փառաբանութիւն և 'ի պատիւ Ցեառն մերոյ , որուն համար իրենք զիրենք այսքան խիստ ճգնութեան մատնած էին : Ուստի անյապաղծունկի վրայ գալով սկսան ինդրել Աստուծմէ զօրութիւն , քաջութիւն մարտնչելու այն տեսլեան մէջ յայտ-

Սակայն Սուրբն Սուքիաս՝ որ անոնց երիցագոյնն էր , չըհաւանելով այս խորհրդոյն կ'ըսէ իւր ընկերներուն . Սիրելի եղարք իմ , խնդրենք Տիրոջմէ որ մեզմէ աւելի զօրաւոր մշակ մը զրկէ , և նա՝ կռոց մեհեաններն կործանէ , և բովանդակ այս երկիրն մոլորութենէ 'ի ճշմարտութիւն բերէ : Այս խօսքերուն հաւանեցան Սուքիասայ ընկերներն և յարատեւեցին իրենց նախկին ընթացից մէջ , համոզուելով թէ՝ այս էր Աստուծոյ կամքն : Այսու ամենայնիւ ճշմարտութեան համար վկայելով մեռնելու փափաքն օր քան զօր կը սաստկանայր իրենց սրտին մէջ , և իւրեանց մաղթանքը առ այս կէտ նպատակի միայն ուղղեալ էր :

Գիտէր Աստուած իւր ծառայից սիրտն , որով լսեց վերջապէս անոնց մաղթանաց , լեցնելով անոնց սուրբ և մաքուր սրտիցն իղձն և փափաքն , մինչև իսկ յայտնեց իրենց առանձին տեսլեամբ մը : Վասն զի Սուրբերէն մէկուն՝ որ Պողոքտէս կը կոչուէր , գիշեր առեն տեսիեր մը երեցաւ , զոր նա ինքն հետեւեալ առաւօտ իւր ընկերացն պատմեց :

«Այս գիշեր կը տեմնէի , ըսաւ Պողոքտէս , առիւծ մը որ Ալանաց արքունիքէն ելլելով կուգար դէպ 'ի մեղ , և երբ մեր քովն հասաւ սկսաւ սաստիկ կուուիլ ամենուս հետ :»

Ասոր առաջին և գլխաւոր գործքն եղաւ իւր երկրին մէջ նորանոր կարգաւորութիւններ ընել , նա մանաւանդ վինուորական գասուն նկատմամբ : Վասն որոյ նախ և յառաջ իւր ընդհանուր բանակին հաշիւն ըրաւ , և սկսաւ թէ անցեալ և թէ ներկայ զօրականաց և զինուորաց անուններն արձանագրել : Այս պարագայիս մէջ իմացաւ նա՝ թէ Ալանաց Արքունեաց վերաբերող մի քանի անուանի քաջ մարդիկ՝ Սադինիկ Դշխոյին հետ 'ի միասին 'ի Հայս գայսած են : Ուստի սկսաւ մանրամասնօրէն տեղեկութիւն վինտուել ատոնց վրայ :

Նոյն կէտին Ալաններէն ոմանք՝ յորս կը գտնուէր նաև Ակուհեր կամ Ակոհեր անուամբ նախարար մը , որք նոր հաթիւն , քաջութիւն մարտնչելու այն տեսլեան մէջ յայտ-

սած էին իրենց երկիրն, և կատարեալ տեղեկութիւն առած էին Սրբոց վրայ, փութացին ծանօթութիւն տալ թագաւորին անոնց վիճակին վրայ:

Պատմեցին միանդամայն անոնց առանձնանալն, և Ալանաց և Հայոց առտուածներն ձգելով Քրիստոսի հետեւիլն, և մեծամեծ նեղութեամբ Զրաբաշխ լերանց մէջ բնակիլն. և թէ իրենք՝ որ Սաթինկայ մահուընէ ետքը Հայոց արքայորդոց հետ բարեկամնալով այս տեղեկութիւններն ըստացած էին, չէին սխալիր երբէք:

Այս եղանակաւ թագաւորին հետաքրքրութիւնն յագելով, անյապաղ ուզեց Սրբոց բնակավայրն առանձին մարդիկ խրկելով, վերստին կոչելզանոնք յարքունիս:

Ռւստի Բառլահա կամ Բառլախայէլ անունով զօրավարի մը հրամանին ներքե, իւր զօրաց մէջէն կորովի և քաջ ըսպառազէններ ընտրելով, մի քանի լրտեսներու հետ մէկտեղ զրկեց գէպ 'ի Հայս, անոնց ձեռքն Ալանաց արքունիքէն հոն գնացողներն փնտոելու հրամանագիր մը տալով: Սակայն անոնց ըստ թէ «Եթէ գտնելու ըլլաք շատ պարզեւներ տալով համոզեցէք որ դան հոս, բայց թէ որ ուզեն յամռաեալ մնալ իրենց աեզն և չ'հաւանին դալ, առ հասարակ առանց և ոչ մէկուն խնայելու զամենքն ալ սրոյ ճարակ ընելով սպաննեցէք»:

Թագաւորին հրամանին համաձայն Բառլահա զօրավարն իւր զինուորներովն և միւս ընկերներովը, նոյն հետայն ճամբայ ելաւ»:

Իսկ երբ հասան՝ գիւրութեամբ Սրբոց տեղն գտնելու համար առաջնորդ մը առին հետերնին, որոյ առաջնորդութեամբն Զրաբաշխ լեռն հասան որ ինչպէս ըսինք Սուկաւէտ ևս կը կոչուէր:

Աննկարագրելի էր անոնց զարմանքն, երբ հեռուէն դիտեցին Սուրբերն որք բոլորվին այլակերպեալ էին, վասըն զի ոչխարաց նման խոտով կը կերակրուէին, և իրենց

մարմիններն մազով պատաժ ըլլալուն համար, պաշաւոր քօշերու և կամ մամուապատ քարերու կը նմանէին:

Սրբոց այս տարօրինակ և արտասովոր վիճակին տեմնելով զօրավարը, մօտեցաւ անոնց և զարմացմամբ հարցուց.

«Ի՞նչ էք գուռք, և ի՞նչ է ձեր գործը: Դուք թէպէտ և մարդկային կերպարանք ունիք, այլ Զեր եղանակը բոլորվին այլակերպ, վասն զի ոչխարաց պէս մազապատ, անոնց նման խոտ կը ճարակէք»:

Սուրբ Սուրբիան նոյն ընդ նոյն անվրդով պատասխանեց և ըստաւ.

«Մենք մարդ եմք բնութեամբ, և ազգով Ալան, և Ալանաց արքունիքէն եմք. սակայն ամբարչտութեան և անաստուածութեան ժանապատէն փախչելով, հեռացած եմք անկից, և եկած հոս լերանց մէջ ապաւինած եմք: Մի՛ զարմանար ո՛վ զօրավար եթէ զմեզ այս վիճակին մէջ կը տեսնես, վասն զի վերին զօրութեամբ զօրացած, մեր Տիրովք և մեր Պատուծոյն յաւիտենական յուսոյն համար է որ մենք այս եղանակաւ կ'ապրինք»:

Սակայն Բառլահա՝ որ անկարող էր ըմբռնել իսկ՝ թէ ի՞նչ էր Սուրբիասայ ըստ զօրութիւնը, և մարդկային խելքով չափելով չ'էր կրնար իւր տեսածին իսկ հաւատալ, կրկնեց.

«Այս տեղերն խոնաւ և արեգական ջերմարեր ճառագյթներէն զուրկ են. լեռներն ալ առատ ձիւնով պատաժ են. ի՞նչպէս ուրեմն կրնաք Դուք հանդուրժել բնութեան այս խստութեանցն, և այսպիսի տաժանելի կենօք մը անցնել Զեր օրերն, մինչդեռ Դուք որ Արքունեաց կը պատկանիք, եթէ ուզէք կարող էք ամենափափուկ և հեշտասուն կեանք մը վայելել, զոր մեր առատասիրտ թագաւորն Զեզ պիտի չի զանայ երբէք»:

«Յիրաւի գժուարին է քեզով որդեակ իմ, կը պատաս-

խանէ Սուքիաս, հաւատավալ այս մեր կենաց կարելիութեանը սակայն գիտցած ըլլաս որ ով ոք երկնից և երկրի Արարչին Աստուծոյ կը հաւատայ, ամէն բան Անոր կամացը համաձայն կը փոխուի, և ինչպէս որ կամենայ այնպէս կը կատարուի իւր ծառայիցն և իւր անուան փառաբանչաց վրայ: Արդ քանի որ մենք Աստուծմէ ողբրմութիւն դատանք, և զնա միայն մեր բոլոր սրտովն սիրեցինք, և նորա վրայ դրած եմք մեր յոյսն, ամենայն ինչ կը դիւրանայ, քաղցր կ'ըլլան մեղ այս վիշտերն և նեղութիւնք, այս խոնաւութիւնն և ցրտոյ սաստկութիւնը, և Արքունեացդ հանգստութիւնն, հաճոյքն, փառքն և պատիւ ոչինչ կ'ըլլան մեր առջեւ: »

Բառլահաի զարմանքն աւելի սաստկանալով, մանաւանդիւր ներքին զայրոյթն ծածկելով, դարձեալ քաղցրութեամբ մը Սուքիասայ կը հարցնէ ըսելով:

«Ո՞ր տոհմէն ես Դու, և ի՞նչ է քու անունդ: »

«Ես, կ'ըսէ Սուրբը, երկրորդական գահով թագաւորին գահակից էի, և իմ անունս առաջ Բարաքադրայ կ'ըսուէր, և իսկ երբ որ Աստուծոյ գիտութեանը հասայ, Սուքիաս կոչուեցայ, զի խաղաղական կեանք մը ստացայ: »

«Կարծեմ թէ՝ կը յարէ զօրավարը, Դու պատերազմով մէկ մը ըլլալու ես: »

«Ոչ միայն, պատերազմով կ'ըսէ Սուքիաս, այլ նաև Շապուհ թագաւորին նվազակիցն էի: »

«Եթէ այդպէս է, կը յարէ դարձեալ զօրավարը, մի յամառիր, այլ եկուր հաւանէ ինծի ու դարձիր քու առաջին պատւոյդ: Այն ատեն երկրորդական Գահին վրայ պիտի բազմիս, և քու ծերութեանդ օրերն փառօք և պատւովիտի անցնես, վայելելով գանպատմելի հանգստութիւն մը: »

«Բայց ո՞վ Բառլահա, կ'ըսէ երանելին, իմ Տիրոջս մը շակն եմ ես, և իմ վարձքս ընդունելու ժամանակն հասած է, ի՞նչպէս ու բեմն իմ յետին ժամերուս մէջ ունայն ձեռքով ետ պիտի դառնամ: »

«Յայտնի է արդէն, կ'ըսէ հեգնութեամբ մը զօրավարը, թէ ո՞վ է քու Տէրդ, և որուն ծառայելու: Միթէ խաչեալը չէ զոր Դու քու Տէրդ կը կոչես: »

«Այսու պեղի, կը պատասխանէ Սուրբը, յայտնի է իմ Տէրս, և է Այն որ երկինք ու երկիրը ստեղծեց, և որ է Տէր տէրանց և թագաւոր թագաւորաց: Դու կարող իսկ պիտի չըլլայիր գալ հոս եթէ նա՝ թոյլ չի տար քեզի: »

«Ափսոս քեզի, կ'ըսէ զօրավարը կարեկցելով մը, ազատութիւնդ և մեծութիւնդ թողուցած, մշակութեան կը ծառայես: »

«Ո՞հ, կ'ըսէ երանելին, եթէ գիտցած ըլլայիր և ճանչցած ինչպէս որ պէտքէ, իմ Տէրս, Դուն իսկ այս մշակութիւնը յանձն կ'առնուիր, վասն զի այնու անապական կեանքը կ'ստանայիր: »

Հ Յ 39

Իսկ Բառլահա տեսնելով Սրբոց հաստատամտութիւնը, և նկատելով որ իւր խոստացած փառքն և պատիւն անոնց աշքին ոչինչ և մնոտի իրեր են, և նա մանաւանդ զինքը իսկ կը թելադրեն իրենց հետեւելու, սաստիկ արհամարանօք մը սկսաւ սպառնալ, և զանոնք յանդիմանել ու սաստել: Բայց այս յանդիմանութիւնքն փոխանակ վիշտ պատճառելու աւելի եւս ուրախացուց Սրբոց սրտերն:

Ուստի Սուրբն Սուքիաս, որ լաւ ըմբռնած էր բռնաւորին միտքն և խորամանկ հնարքներն, ժողուեց բոլոր ընկերներն առանձին տեղ մը և ըսաւ անոնց.

«Եղբարք իմ սիրելիք, ահաւասիկ մեր կատարման ժամանակն մօտեցաւ, յորում մեր ամենասիրելի Փրկին պիտի վարձատրէ զմեղ իւր արքայութեան մէջ: Օրէնքն ուրեմն ու փառաբանենք զինի որ արժանի ըրաւ զմեղ այս անպատում պարգեւաց: »

Այս խօսքերուս վրայ ամենքն ալ ուրախութեամբ լրջուած կը փառաւորէին դԱստուած: Երբ զօրավարն տեսնելով զանոնք մօտեցաւ անոնց, և շողոքորդիչ ու հրապուրիչ խօսքերով, և շատ մը պարգեւներ խոստանալով

կ'աղաւէր անոնց, որպէս զի լսելով իրեն վերադառնային յարքունիս :

«Եթէ կ'ըսէր, համոզուիք ու դառնայք Զեր երկիրն, պաշտէք Զեր հայրենի կրօնքը, և յանձն առնուք Զեր նախկին պաշտօնը, գիտցած ըլլաք որ ամենայն փառոք և պատով պիտի յարգուիք, աղատելով այս տաժանելի կեանքէն, որ Չեզ անօդուտ տեղ կը հալեցնէ և կը մաշեցնէ :»

Բայց Սուրբերն բոլորը մէկ բերան պատախան տուին և ըսին .

«Մեր պարգեւատուն Աստուած է, որն որ զմեզ սատանայէն ու անոր գործքերէն աղատեց . քու թագաւորիդ կողմանէ խոստացած պարգեւներդ քեզի հետ մեկտեղ թող մատնուին 'ի կորուստ, որովհետեւ Դու և քու թագաւորդ չարին արբանեակներն էք, մինչդեռ մենք մի միայն Աստուծոյ պարգեւացն կ'սպասենք, և անոր վրայ միայն մեր յոյսն դրած եմք :»

Այն ատեն բռնաւորն զայրանալով հարցուց .

«Ուր է Զեր պարգեւատուն :»

«Աստուած որ մեր պարգեւատուն է, պատասխանեցին միաբերան, ամէն տեղ և ամէն բանի մէջ ամենայն ինչ է . Ան է որ երկինքն ու երկիրն և անոնց մէջ գտնուած ամեն արարածներն ստեղծեր է . Անիկայ է մեր Տէրն ու թագաւորը, անիկայ է որ ամէն կենդանեաց կենաց ու մահու վրայ իշխանութիւն ունի . Անկից երկինք կը դողան և Անոր խօսքէն երկիրս կը սարսի . Անիկայ է որ ծովուն կը հրամայէ և զանի կը ցամքեցնէ . կը սաստէ գետոց և յետս կը դառնան : Գիտցած ըլլաս ո'վ զօրավար թէ նոյն ինքն մեր Աստուածը պիտի սաստէ թէ քեզի և թէ քու խորհրդակցիդ սատանային, և պիտի չի զօրես Դու բան մը ընել մեզ վասն զի Անոր ծառայներն եմք :»

Երբոր բռնաւորն լսեց այս խօսքերն՝ սկսաւ սաստիկ բարկանալ անոնց վրայ, և իւր կատաղի բարկութենէն կը

դողար և ակուայներն կը կրճտէին : Սակայն քիչ մը ատեն զանոնք թողլով իրեններուն հետ խորհրդակցիլ սկսաւ, թէ ինչ եղանակաւ և ինչպիսի մահուամբ զանոնք կորսնցնէ :

Այս տեսնելով երանելիներն, և իւրեանց կատարման վայրկենին մօտենալն նկատելով, ուրախ և զուարթ սրտիւ սկսան աղօթել այսպէս .

«Ով Տէր Աստուած, երկնի և երկրի ստեղծող, որ ոչնչէն ամէն արարածներն ըրիք . Դու Ճշմարիտ Աստուած Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ այս աշխարհս եկաւ ու մարմին առաւ, մեզի համար խաչուեցաւ մեռաւ և թաղուեցաւ, ու երեք օր ետքը յարութիւն առաւ . Եւ քու Սուրբ Հոգիդ որ ամէն արարածները կը լեցնէ :»

Այսպէս Աստուծոյ ստեղծագործութեամին և փրկարդութեամին առ մարդկային սերունդն ըրած բարիքներն և երախտիքն մի առ մի յիշատակելէն ետքը շարունակեցին իրենց աղօթքն ըսելով .

«Որդ ով մեր բարերար Տէրը, դարձուր քու բարեհայեց աչքերդ մեր վրայ որ քու ծառայներդ եմք, վասն զի մենք մեր բոլոր զօրութեամբ զքեզ սիրեցինք, և քու սիրելեացդ խոստացած անսուտ խոստանցդ հաւատացինք :

«Ի Քեզ յուսացողացս զօրութիւն տո՛ւր, զօրացնելով ըզմեզ այս պատերազմին մէջ զոր քու անուանող համար մեր վրայ թշնամին յարուցած է, որպէս զի բռնաւորն և որուն արբանեակն եղած է նա՝ սատանայն, ամէնան և խաղ ու ծանակ ըլլան, և քու անունդ փառաւորի : Ով ողորմած և գթած Աստուած մեր, մենք տկար եմք, Դու ուրեմն մեզի զօրավիդն և օգնական եղիք, զի մի գուցէ թշնամին այս քու բանական հօտք ցրուէ և հեռացնէ քեզմէ : Տո՛ւր մեզի քու յաղթութեանդ նշանը, զի մի գուցէ մեր հօգւոցն թշնամին իրենց խօսքերով դառնութեան որսմը խառնէ ու ապականէ Աստուածային շտեմարանիդ մէջ ժողովեալ ցորեանը, և չի բուսնի մեր այգւոյն մէջ այն մնասակար

դաղձը, և չ'աղարտէ օրհնութեան ողկոյզն զոր յաւիտենական հնձաններուն մէջ կը լեցնես:

«Թող չի սասանին մեր ոտքերն, այլ ամրացուր քու աջովոր, և երեւելի ու աներեւոյթ թշնամոյն դիմացն զմեղ աներկեղ պահէ, և թող փառաւորի քու Անունդ»:

Այս և ասոր նման աղօթքներով կը զօրանային երանելիներն, և հոգւով և մարմնով զուարթացած Աստուծոյ իրենց ըրած այնքան բարեացն համար չնորհակալութեան աղօթքներ կ'ուղղէին առ ամենաբարին Աստուծ, կրկին և կրկին խնդրելով Անկից զօրութիւն թշնամոյն դէմ քաջար կոռւելու, և վերջապէս փառաց անթառամ պսակին արժանի ըլլալու, որու կենդանի հաւատքով, ջերմ սիրով և հաստատուն յուսով կը տենջային:

Իսկ բոնաւոր Բառլահան երբ երանելեաց այս ընթացքն և անտարբեր վիճակն կը տեսնէր, թէ կը զարմանայր, և թէ կատաղաբար կը բարկանայր, ուստի ձանձրացած սաստեց անոնց և հրամայեց լուել: Սակայն Սուրբերն աղաչեցին իրեն քիչ մը ժամանակ ևս թողլու զիրենք իրենց աղօթից մէջ, իրեն աղատ կամացը ձգելով ընել այնուհետեւ ինչ որ կ'ուղէր: Ապա դարձեալ ի ծունը կեցած ոկտան աղօթել պապէս.

«Քուկր եմք ով Տէր, 'ի քեզ յուսամք, քու առջեւդ ուրեմն ինկած կը պաղատիմք. Տուր մեղի կատարել մեր ընթացքը քու կամացդ համեմատ, ու քու անուանդ համար մեռնելու արժանի ըրէ զմեղ, որպէս զի կարող ըլլանք արքայութեանդ մէջ եղած երանելեաց նման վարձք ընդունիլ: Կը փութամք ելլել այս մարմինէն, և քու վկայիցդ և մեր վարդապետացն գնդին մէջ խառնուիլ, որոնք յանդիտութենէ 'ի գիտութիւն, 'ի խաւարէ 'ի լոյս, 'ի ստութենէ 'ի ճշմարտութիւն բերելով զմեղ, քու վերին երուսալէմդ առաջնորդեցին, ուր քու Սուրբերդ և սիրելիներդ պիտի ժողովին, զամն զի քեզի կը վայելեն փառք և զօրութիւն ամէն:

Այս եղանակաւ զօրացած աներկիւդ և անվախ բռնաւորին դիմացն եկան և ըսին.

«Ահա ժամանակը հասած է, հիմնյ կատարել' ով թառլահա քու թագաւորիդ և Զեր խորհրդակցին Սատանայի հրամանը, զամն զի մենք մեր Տիրոջը թիսուսի Քրիստոսի անուանը համար պատրաստ եմք մեռնիլ ամենայն քաջութեամբ»:

Բռնաւորն այս խօսքերուն վրայ, սաստիկ զայրացած զօրքերուն հրաման ըրաւ զանոնք կապելու և բերելով տանչելու:

Այսուհետեւ անոնց ամէն մէկուն համար զատ զատ ցեցիր զարնել տարվ հրաման ըրաւ զանոնք պրկել, ու յետոյ հրամայեց լապտերներ և ջահեր բերել և Սրբոց մարմիններուն ներքեն գնել. «Վամն զի՝ կ'ըսէր երանելեաց, քանի որ չէք հաւանիր ինձ հետ գալու, և թագաւորէն պատիւներ ընդունելու, զգեզ ամենքդ ալ կրակի կիզմամբ խորովելով իմ թագաւորիս բարձր հրամանը պիտի կատարեմ»:

Անգութ Բառլահան կը կարծէր թէ այսու պիտի զարհութեցնէ երանելի վկայիներն, մինչդեռ ընդհակառակն կը տեսնէր զանոնք որ տանջանաց մէջ աւելի համարձակութիւն կ'առնուին: Վամն զի Անոնք իրենց մարմնոց այրելը և ոսկըրներուն ցաւն ու կսկիծն բանի աւելչ'գնելով, ուրախութեամբ կ'ընդունէին և արիաբար կը համբերէին տանջանաց, և կ'օրհնէին զԱստուած ձայնակից ըլլալով Սրբոյն Սուրբիասյ որ կը սալմնաէր ըսելով.

«Աստուած յօդնել ինձ նայեաց, և Տէր յընկերել ինձ փութայ: Ամաչեացեն և յամօթ լիցին որք ինդրէին զանձն իմ դարձին յետո և ամաչեացեն, ոյք խորհէին ինձ չար:

Վամն որոյ բռնաւորն հրաման ըրաւ զինւորաց որ անոնց բերանը դայլ (քերծի գելոց) գնեն, որպէս զի կարող չըլլան զօթել և օրհնել զԱստուած:

Այսու ամենայնիւ Սուրբն կողբատոս այդ ալ բանի տեղ
չի դնելով, որչափ որ կրնար ամենուն կ'առաջնորդէր յա-
զօթս մկնելով հետեւեալ սաղմոսը.

«Ինչպէս որ եղերուն ջրոյ աղբիւրներուն կը փափաքի,
այնպէս ալ մեր անձինքը քեզի կը փափաքին ո՛վ Տէր Աստ-
ուած մեր» :

Բռնաւորն այն ատեն հարցուց.

«Ի՞նչ են այդ եղերուներն որ աղբիւրներու կը փափա-
քին, որոց նման Ձեր անձինքն ալ կը փափաքին» :

Որում կողբատոս պատասխանեց ըսելով .

«Ինչպէս որ անոնք որարդներէն զարնուելով կը տապա-
նան, կը ծարաւին, և ջրով իրենք զիրենք զովացնելու կը
փութան, նոյնպէս մենք ալ յաւիտենական կենաց մէջ խո-
խողացող կենդանութեան ջրոյն փափաքողներն եմք Սատա-
նային որոգայթներէն ազատելով, և շարունակ մեր հզօր
ու կենդանի Աստուծոյն ծարաւած եմք ու կշտապենք ենել
մեր մարմոց մէջէն և անձկացեալ Քրիստոսին համնիլ» :

Այն ատեն Բառլահա չարաչար ու դառն տանջանքնե-
րէն քակել հրամայեց և ըստ.

«Քանի որ այդպէս կուղէք, ես ալ չուտով Ձեր փափա-
քին պիտի հասցնեմ, սրախողխող զրկելով զՁեզ ամենքդ-
ալ այս կեանքէն որում արժանի չ'ք երբէք» :

Այս լսելով Սուրբերն աւելի մեծ ուրախութիւն մը ըդ-
գացին, վասն զի քանի մը վայրիենէն պիտի արժանի ըլլա-
յին ընդունելու փառաց երկնային պսակն, միանալով իրենց
վարդապետացն հետ յերկինս։ Ուստի դարձեալ ծունկի
եկած աղօթքի կեցան միաբան և ըսին.

«Տէր Աստուած զօրութեանց որ ամենասուրբ Երրոր-
դութեանդ փառացն համար արժանի ըրիր զմեղ մեր ըն-
թացքն անարատութեամբ կատարելու, արդ լսէ մեր վեր-
ջին անարժան իմպրուածքին, ու դժա՛ Հայոց այս թշուառ
երկին վրայ, և ըրէ որ ամենասուրբ թիւն Երրորդութեանդ-

Երկրպագութեան և փառաբանութեան դառնան, վասն զի
արարածը ամենայն քուկդ են, ու քեզ միայն կը վայելէ
երկրպագութիւն և փառք : Խոէ, ով Աստուած մեր, այս քու-
ծառայիցդ աղօթիցն և ըրէ որ ուր որ մեր արիւնը թափի,
այն երկրին հողը ամեն ցաւագարներուն բժշկութիւն ըլլայ,
և այս երկրէն բզիմէ աղբիւր մը որոյ չուրն ամէն ցաւերուն
դեղ և դարման ըլլայ . եւ եթէ կամ ցաւահար կամ այ-
սահար կամ ջերմոտ և կամ ո և իցէ ցաւոց ենթակայ մէկ
մը դայ մեր զենման տեղը ու զմեղ բարեխօս բռնէ և իւր
ցաւոց առողջութիւնը խնդրէ քեզմէ, ով Տէր մեր և Աստ-
ուած, Դու լսէ անոնց վրկելով զանոնք ամէն նեղութենէ,
և բժշկելով թէ հոգեւոր և թէ մարմնաւոր հիւանդութիւն-
ներէ, վասն զի Դու ամենայնի կարող ես ու քեզ փառք յա-
ւիտեանս ամէն» :

Այն ատեն երկնքէն ձայն մը եկաւ անոնց որ կ'ըսէք .

«Ինչ որ խնդրեցիք պիտի տրուի ձեզի և ձեր վկայու-
թեան տեղը բժշկութեան աղբիւր պիտի ըլլայ, և այն երկ-
րին հողը շատ ցաւերու փարատում պիտի ըլլայ տարւոյն
ամէն օրերը : Եկէք Դուք, ով սիրելի նահատակք անուան
իմի, Ձեզի համար պատրաստուած օթևանը, ուր ձեր այն-
քան աշխատութենէ ետքը ձեր հանգստութիւնը պիտի
կտնէք, և փառաց անվերջանալի յաւիտենականութեան մը
մէջ պիտի ընդունեիք փառաց պսակը զոր ձեր այնքան ճրգ-
նութեամբը պատրաստեցիք» :

Քրիստոսի սուրբ Վկայներն զայս լսելով, ու վերին չնոր-
ջօք զօրացած կնքեցին զինքեանս Սուրբ Խաչին նշանովը ու
դիմեցին յօժարութեամբ բոնաւորին դահճացը, որք սրով
կոտորեցին սուրբ Նահատակներն, պատառելով գառներն
գայլերու նման, մինչդեռ անոնք ի Հայր, յՄրդի և 'ի Սուրբ
Հոգին աւանդեցին իւրեանց Սուրբ հոգիներն երկնային
հրեշտակներէ ողջունուած, քառասուն և չորս տարի Սու-
րկաւետ լերան վրայ անտառնելի ճգնութեամբ ապրելով, և
Տէառն օգնականութեամբ խոսով կերակրուելով :

Այսպէս յամի Տեսուն իբր 130 կամ 140 նաւասարդ ամսոյն 17 ին, քաջ և արի Նահատակքն Քրիստոսի իրենց Փրկչէն յաղթութեան պսակն ընդունեցան :

Իսկ Ալանաց զօրավարն զՍուրբսն նահատակելէն ետքը հրաման ըրբաւ իւր զօրաց որ անոնց մարմիններն այն տեղ գտնուած վիճերուն մէջ նետեն՝ անոնց վրայ քարեր կուտելով, և ինքը իւր բոլոր ընկերներովն երկրորդ օրն դարձաւ իւր աշխարհն, ուր թագաւորին պատմեց ամենայն ինչ :

Բայց ըստ վկայարանից ոչ բոլոր Սուքրիասեանք նահատակուեցան, այլ անոնցմէ երկուքն՝ որք հաւանակաբար կրտսերագոյնքն՝ Յակովը և Թէոդոսիոս ըլլալու են, վախնալով սաստիկ տանջանքներէն և մահուընէ՝ լերանց խորչերն պահուըտեցան, ու քանի մը օր ետքը վերագարձան իրենց տեղերն, ուր տեսան իրենց հարց և ընկերաց արեան հետքերն, որով սկսան վնասուել անոնց մարմիններն, սակայն կարող չեղեն գանել, ուստի սաստիկ ցաւելով որ չի կրցան անոնց նշխարներն պատշաճագոյն տեղեր ամփոփել, գոնէ արեան վաղած տեղերն հողով ծածկեցին և քարեր կանդնեցին յանմուաց յիշատակ մարտիրոսութեան և նահատակութեան Սրբոց Սուքրիասեանց :

Այնուհետեւ իրենք ալ չի համարձակելով մնալ հօն, հարաւային կողմէն եկան դէպի արեւմտեան կողմ լերան ըստորոտն, և հօն դաշտաբերանին մօտ բարեխառոն տեղ մը գտնելով, ուր դէպի հարաւ շատ մը ալլերակներ կը բըդիէն, հաստատեցին իրենց բնակութիւնը։ Յետոյ դետնին տակ իրենց արդելանոցներ շինեցին և անոնց մէջ պապաշարութեամբ ու կատարեալ ճգնութեամբ մինչեւ իւրեանց մահուան օրն ապրեցան։ Քանի մը հովիւներ ժամանակէ ետքը գտնելով զանոնք որ վախճանած էին, նոյն դարափոսներուն մէջ ծածկեցին, կարծելով թէ անոնք բընակեալ քաղաքներէն հալածուած հիւանդուններ էին, որք հօն մեռած էին։

Այս այն տեղն է, որուն քով քիչ ժամանակ ետքը Վաղարշ թագաւորն մեծ աւան մը շինեց կոչելով զայն իւր անուամբը Վաղարշակերտ (ռամկօրէն Ալաշկերտ) (1), և հօն՝ օդին բարեխառնութեան պատճառաւ իւր Խոսրով որդին կը բնակեցնէր :

Իսկ անոնց ընկերացը Սրբոց Սուքրիասեանց նահատակաց մարմիններն Սուկաւէտ կամ Ջրաբաշխ լերան վիճերուն մէջ մնացին մինչեւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ժամանակներն :

Վասն վի երբ մեր Սուրբ Հայրն Գրիգորի Լուսաւորիչընդհանուր Հայերը 'ի Քրիստոսական լուսաւորութիւն բերաւ մկրտելով զՀայոս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, և ամէն կողմի կուռքերն և բագիններն կը կործանէր, և անոնց տեղ եկեղեցիններ կը կանգնէր, Ս. Հոգիէն ազդեցութիւն մը ունեցաւ Սուրբ նահատակաց վրայօք, և նոյն յետայն գնաց այն տեղն ուր Սրբոց մարմիններն կը մնային, և հօն անոնց վրայ վկայարան և վանք մը շինեց, վանաց առաջին երեց կարդելով իւր աշակերտներէն մին որ Արաւ կը կոչուէր :

Կըսուի նաև թէ կոստամդիանոս կայսրը Հրեշտակէն հըրաման առնկով ի Հայոս եկած ըլլայ, ու Սուրբ վկայից նըշխարներն Սուկաւէտ լերան վրայ անարատ գտած ըլլայ, գտնելով միանդամյն տախտակ մը որուն վրայ անոնց անուանք գրուած ըլլան, և ապա զանոնք պատով առանձին տեղեր ամփոփելէն յետոյ Սրբոց նշխարներէն և արեւամբը ողողեալ հողէն մաս մը իւր հետ առնելով վերագարձած ըլլայ իւր տեղը :

Այս ամէնքը որ Սրբոց վարուցն և վկայաբանութեան կը վերաբերին, ըստ վկայելոյ ճառընտրաց, Հոռվմայեցի Անտովն անուամբ անապատական մը գրի անցուցած է։ Թէրեւս կայսերական Աթոռոյն 'ի կ. Պոլիս վոխագրուելու մի-

Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Խ Ն

(1) Հետեւելով Ալաշկերտի բնակչաց առանդութեան և վկայութեան հարկ և պատշաճ կը համարիմք մի քանի տեղեկութիւն տալ որբոց Վկայից բնակավայրին և վկայութեան տեղոյն ներկայ դրից և վիճակին վրայ, զոր քաղած եմք արժանահաւատ ահճինքներէ :

Սրբոց Շիրիմ ըսուած տեղն Ալաշկերտի Մօլլա Սիւլէյ-ման կոչուած գիւղէն երկուքու կէս ժամանակ հեռաւորութեան մանշուշու հաւատացեալներէն կամ աշակերտեալներէն ոմանց զայն աւանդեցին թէ գրով և թէ խօսքով, որոնցմէ վերջը այն Անտովին անապատականը առնելով գրի անցուցած է :

Իսկ Սրբոց Սուքիասեանց վկայից մարտիլոսութեան տեղն, ինչպէս որ անոնք ինդրած էին Աստուծմէ, ամէն ցաւերն փարատող բժշկութեան աղբիւր մը բղիւցաւ որում իբր նոր Սելզամաց Պրոբատիկէ մը Քրիստոնէութեան ատեն ախտաժէտաց բազմութիւնք կը գիմեին և առողջութիւն կը գանէին : Եւ ինչպէս որ Պրոբատիկէին ջրոց յուղման ժամանակին կ'ապահէին, այսպէս այն սքանչելի աղբիւրն երբեմն կ'առատանայր և երբեմն կը նուազէր, վասն զի տարուէ տարի Սրբոց Տօնին օրն կ'առատանայր, և կամ գրեթէ նորէն կը բղիւր, որովհետեւ երբեմն գրեթէ բոլորովին կը կտրէր, ու տեսակ տեսակ ախտերով վշտագնեալներն կը պատէին այն աւուր, յորում իրենց հաւատաքն համեմատ որբոց Վկայից բարեխօսութեամբն կը բժշկուէին, սքանչելի Փրկչին մերոյ փառաց համար, որ փառաւորեալ է միշտ և սքանչելազուծ իւր Սուքիերովին :

Միոյն Աստուծոյ Փառք

ջոյին ուրիշ Հուովմայեցւոց հետ ՚ի միասին Արեւելք եկած ըլլայ այդ Անտովին կոչուածը, կամ գուցէ կրօնիդէսի ընկերն Սուքի Անտովին ըլլայ, որ Սրբոց Լուսաւորչին հրամանաւ գրաւոր և անգիր աւանդութիւններէն քաղելով սուքի Սուքիասեանց վարուց և վկայաբանութեան առաջին գրիչն եղած ըլլայ :

Հաւատատի է և շատ հաւանական կ'երեկի թէ սրբոց Սուքիասեանց վարուց և վկայաբանութեան նախկին պատմիչ և յայտարարքն, Սուքիերէն մնացած երկու ընկերքն էին, որոնք անշուշու հաւատացեալներէն կամ աշակերտեալներէն ոմանց զայն աւանդեցին թէ գրով և թէ խօսքով, որոնցմէ վերջը այն Անտովին անապատականը առնելով գրի անցուցած է :

Իսկ Սրբոց Սուքիասեանց վկայից մարտիլոսութեան տեղն, ինչպէս որ անոնք ինդրած էին Աստուծմէ, ամէն ցաւերն փարատող բժշկութեան աղբիւր մը բղիւցաւ որում իբր նոր Սելզամաց Պրոբատիկէ մը Քրիստոնէութեան ատեն ախտաժէտաց բազմութիւնք կը գիմեին և առողջութիւն կը գանէին : Եւ ինչպէս որ Պրոբատիկէին ջրոց յուղման ժամանակին կ'ապահէին, այսպէս այն սքանչելի աղբիւրն երբեմն կը բղիւր, որովհետեւ երբեմն գրեթէ բոլորովին կը կտրէր, ու տեսակ տեսակ ախտերով վշտագնեալներն կը պատէին այն աւուր, յորում իրենց հաւատաքն համեմատ որբոց Վկայից բարեխօսութեամբն կը բժշկուէին, սքանչելի Փրկչին մերոյ փառաց համար, որ փառաւորեալ է միշտ և սքանչելազուծ իւր Սուքիերովին :

Այս տեղն բնակիչը սպասրունն և կամ չարչարանք յորջորջելով կ'առանդէն թէ՝ խիստ դժուարին զառ ՚ի վայր մը լինելով, Սուքի Վկայից իրենց բնակավայրէն մինչեւ վար հովտին տակ վազով զով և քաղցրահամ ջրէն առնելու համար, շատ նեղութիւն և տառապանք կը ել պարտաւորած են եղեր :

Այս առուակէն փոքր ինչ անդին և Զարչարանք կոչուած տեղոյն հանդէպ ապառաժ մը կը գանուի, որն որ կիւտիոր է, և այս՝ հիմնյ ուխտաւորաց յաճախութեան ժամանակ գեղեցիկ փոյսներով և կապերտներով կը զարդարուի, և կը ծառայէ խորանի տեղ, որուն վրայ քահանայք պատարագ կը մատուցանեն ուխտաւորաց ջերմեռանդութիւնը լեցնելու համար :

Այս ապառաժէն քիչ մը վար և կանաչազարդ մարդագետուց մէջ և զառ ՚ի վայր գիւղք մը կազմով տեղէ մը վճիռ և անապակ աղբիւր մը կը բղիւէ, զոր բնակիչք ոյս Աղինոր կը կոչէն, և կը թուի թէ՝ ըստ աւանդութեան բնակչաց :

նոյն այն աղքիւրն ըլլալու է որոյ ջրոյ համար սուրբ Վկայք աղօթեցին որպէս զի դեղ և դարման ըլլայ ամենայն հիւանդութեանց :


Եւ արդեամբք , ինչպէս կը վկայեն համայն բնակիչք , թէ Քրիստոնեայք և թէ ոչ Քրիստոնեայք , շատ հրաշքներ կը գործուին և ամէն օր հիւանդք և ախտաժէտք կը դիմեն հոն իրբ Պրոբատիկէ Աւաղան , և կը գտնեն իրենց առողջութիւնը :

Վերոյիշեալ ապառաժէն մէկ կամ երկու քարբնկէց հեռաւորութեամբ դէպ ի հարաւ և հովտին աւելի ընդարձակ տեղ մը , հարթ կարմիր քար մը կը գտնուի , որոյ մէջ-տեղն փոքր ինչ խոր և վրան կարմրագոյն չորսած մամույ նման բան մը կը տեսնուի : Համայն բնակիչք կը կարծեն թէ այս քարին վրայ սուրբ Վկայք իրբեւ զոչխարս զենուած և նահատակուած են :

Վ Ռ Ի Պ Ա Կ Ք

Երես	Տող	ՍիԱԼ	ՈՒՂԻՂ
4	23	Քրիստոնեայ	Քրիստոնեայ
3	8	կրապաշտական	կռապաշտական
3	26	զրկեցան	զրկեցաւ
7	8	բնակավայրն	բնակավայրին
8	19	ըլլար	ըլլար
13	16	յիշտակէր	յիշտակէր
13	28	Սադինիկ	Սաթինիկ
20	12	որու	որում
21	9	բերելով	բերերով
21	28	փութայ	փութա'
22	2	կ'առաջնորդէր	կ'առաջնորդէր
22	21	զրկելով	զրկելով
22	32	ամենասրբութիւն	ամենասուրբ





2007



1943